



14(689)

8.06.2023

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտաստություն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՁԵՁ ԲԱՐԻ ԸՆԹԱՑՔ, ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐ

«ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՍՈՎՈՐԵԼ, ԼՈՒՍԱԿՈՐԿԵԼ - ԼՈՒՍԱԿՈՐԵԼ, ԱՄՐԱՊՆԴԵԼ ՁԵՐ ՀԱՎԱՏՁ ՄԵՐ ՊԱՅԵԱՌ ԳԱԼԻՔԻ ՀԱՆԴԵՊ»



ԱՅ ԿԳՄՍ նախարար Նորայր Սկրտչյանը Վերջին զանգի կապակցությամբ ուղերձ է հղել շրջանավարտներին, որում ասվում է.

«Սիրելի՛ շրջանավարտներ՝ Սրտանց շնորհավորում են ձեզ Վերջին զանգի լուսավոր տոնի առթիվ:

«Շրջանավարտ» բառը նշանակում է ուսումնական դասընթացն ավարտած, այսինքն՝ ավարտել կյանքի մի շրջան, շրջափուլ: Իսկ ձեր կյանքի այս շրջափուլը համընկավ մեր երկրի և ժողովրդի համար բախտորոշ ու շրջադարձային իրադարձությունների հետ. 44-օրյա պատերազմ, ժամանակավորապես կորսվեց հայրենիքի մեծ մասը, ազգի սերունդը կազմող ազնվագարն և մեկ բացառիկ աստղաբույլ բռնեց հավերժի ճամփորդի ուղին, դավադիր թշնամու կողմից ավելի քան 160

օր շրջափակված է Մայր Հայաստանի հետ կյանքի ճանապարհը, անորոշության մառախուղը կարծես ետ քաշվելու ցանկություն չունի, բայց այս ամենի հետ մեկտեղ բոլորս միասին կրկին ականատեսը դարձանք մեր հերոս քաջորդիների պանծալի սխրանքներին, իր ազատության ու անկախության համար անդուլ պայքարի ելած արցախցու վճռականությանը, անընկճելի ու աներեր ոգու, որին հիշյալ չարաղետ իրադարձությունները միայն ու միայն կոփեցին՝ վերստին ապացուցելով ինքնորոշման և ազգային արժանապատվության համար մղվող մեր երեսնամյա պայքարի արդարացիությունն ու անբեկանելիությունը:

Սիրելիներս, արագ փոփոխվող աշխարհը ենթադրում է նոր գաղափարներ և կյանքի հանդեպ արդիական մոտեցումներ, որտեղ, ըստ ամե-

նայնի, անհրաժեշտություն է որակյալ ու շարունակական կրթությունը: Առաջիկա և մեր հայրենիքի՝ վիրավոր Արցախի ապաքինման ճանապարհին անհնար է արդյունավետությունն ապահովել առանց արհեստավարժ և մրցունակ մասնագետների, որոնց շարքերը, համոզված են, մոտ ապագայում համալրելու եք նաև դուք, և կարճ ժամկետում մեր փոքրիկ հայրենիքի բարեկեցության և բարգավաճման գործում, անտարակույս, նշանակալի է լինելու նաև ձեր ներդրումը:

Սիրելի՛ շրջանավարտներ, ձեզ ուժ, եռանդ, գունեղ երևակայություն և հաջողություններ են մաղթում. շարունակե՛ք սովորել, լուսավորվել և լուսավորել, ամրապնդել ձեր հավատը մեր պայծառ գալիքի հանդեպ՝ ի փառս Հայոց Արցախ աշխարհի, ի շահ մեր ինքնության և հարատևման:

ՍՐՋԱՆՅՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄԵԾ ԿՈՉՈՒՄԸ ԻՐ ԵՐԿՐՈՒՄ ԱՊՐԵԼՆ Է. ԱՐՅԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻՆ

Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Արքահամյանը օրհնության խոսք է հղել Արցախի շրջանավարտներին:



«Սիրելի՛ շրջանավարտներ՝ Սրտի անկեղծ ջերմությամբ շնորհավորում ենք ձեզ՝ ձեր կյանքի առաջին կարևոր շրջափուլի ավարտի առիթով: Մեր հոգին լցվում է ուրախությամբ, երբ տեսնում ենք, թե ինչպիսի լուսավոր երիտասարդներ են մեծանում Արցախում: Արցախի արհեստական շրջափակման պայմաններում, երբ միասին կրում ենք բազմաթիվ զրկանքներ, երբ մեր վաղվա օրը շատ անորոշ է թվում, ձեր երիտասարդական

եռանդն ու կյանքի հանդեպ սերը գալիս են գոտեպնդելու և զորացնելու մեր սրտերը:

Դպրոցական տարիներին ստացած ձեր գիտելիքները, ուսուցիչների խրատներն ու փոխանցած փորձառությունը կօգնեն ձեզ կյանքում գտնելու ձեր ճիշտ տեղն ու կոչումը: Մեր մաղթանքն է, որ դուք կյանքում ինչ դիրքի և աստիճանի էլ հասնեք, չմոռանաք ձեր ամենամեծ կոչումը. արցախցու համար ամենամեծ կոչումը իր երկրում ապրելն է և մեր նահատակների, ովքեր ձեզ նման պայծառ երիտասարդներ էին, արյամբ սրբացած այս հողին տեր կանգնելը: Չկտրվե՛ք ձեր արմատներից, որովհետև ծառի նման իր արմատից կտրված յուրաքանչյուր մարդ բարոյապես ենթակա է չորացման և անհետացման:

Աղթում ենք, որ Աստված մշտապես ուղեկից լինի ձեր կյանքի հետագա տարիներին, իսկ դուք ձեր բոլոր քայլերը փորձեք կատարել Աստուծո կամքի համաձայն, փնտրեք իմաստություն և ճշմարտություն, որպեսզի գտնեք կատարյալ խաղաղություն և ազատություն: Անմացորդ սիրով սիրեք մեր հրաշք երկիրը և կերտեք ձեր արժանապատիվ երջանկությունը ազատ ու անկախ Արցախում:

ԱՍՏՎԱԾ ՕՐԴՆԻ՝ ՁԵՐ ԸՆԹԱՑՔԸ»:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԳԵԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ



Վերջին զանգ, վերջին մտորումներ, դպրոցական տարիների հասուն ու խորը վերլուծություն, անհանգստություններ կյանքի շեմին, արածի ու չարածի արդարացի գնահատականներ, խորը ակնհայտ անհոգ տարիների համար, բազում հարցականներ, արցունքախառն ժպիտներ, հրաժեշտի ցավոտ զգացողություններ ու հազար այսպիսի հակասական հոգեկան ցնցումներ ու ծանր ակնթարթներ, որ համակում են շրջանավարտներին ու սիրտն անմնացորդ իրենց սաներին նվիրաբերած մանկավարժներին:

Ուսումնառության ընթացքում սովորողներն ունենում են շատ հուզիչ պահեր՝ կապված իրենց նշանավոր տոների հետ (Առաջին զանգ, Հրաժեշտ Այբբենարանին, Հրաժեշտ տարրական դասարաններին, տոնական օրերին նվիրված միջոցառումներ և այլն): Այս ամենի շարքում այլ բովանդակություն ու իմաստ ունի Վերջին զանգի համոզիչավոր արարողությունը, որն իր հետ բազում հարցականներ ու հույզեր է առաջացնում: Բայց Վերջին զանգը միաժամանակ լուրջ խորհրդածությունների առիթ է տալիս, քանի որ դա այն ժամանակահատվածն է, երբ շրջանավարտը պիտի կարողանա կողմնորոշվել, թե կյանքի որ ճանապարհն է ընտրում, արդյո՞ք բավականաչափ կամք կունենա նպատակին հասնելու համար, իր ուժերը կբավականացնե՞ն նախասիրած մասնագիտությունն ընտրելու գործում, թե՞ ոչ:

Այսօր տոն է դպրոցներում, սակայն այսօր այն նախկին տարիներին կազմակերպվող ճոխ ու շքեղ արարողությունների, ուրախ ու անհոգ միջոցառումների շրջանակը չունի: Թախծոն ու տխրությունը շղարշում են խիճոն ու ծիծաղը. ուրախ շեշտերը պակասում են:

44-օրյա պատերազմից հետո շատ բան է փոխվել, պակասել են ուրախանալու առիթները, ավելին, 5000 զոհերի իրողությունը խաթարել է մեր ուրախ կենցաղն ու առօրյան:



ՈՒՂԵՐՁ

ԱՐՅԱԽԸ ՉԻ ԵՂԵԼ ԵՎ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ ԱՂՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ. ԴԱ Է ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԸ. ԱՐՅԱԽԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մայիսի 23-ին ուղերձ է հղել առկա արտաքին ու ներքին մարտահրավերների վերաբերյալ.

«Մերելի հայրենակիցներ Արդեն 163 օր շարունակ Արցախը ապրում է խորացող աղբյուրային հանցավոր շրջափակման պայմաններում: Մեր շուրջը տեղի են ունենում բովանդակային առումով անընդհատ փոփոխվող իրադարձություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց ազդեցությունն են թողնում տարածաշրջանի և, մասնավորապես, Արցախի Հանրապետության ու մեր ժողովրդի վրա: Չնայած ստեղծված իրավիճակին ու օրեցօր ահազանցող մարտահրավերներին, Արցախի ժողովուրդը մաքառում է իր սեփական հողում իր հավաքական իրավունքների ու ազատությունների համար՝ շարունակելով նախնիների սուրբ գործը:

Շրջափակմամբ և արտաքին այլ գործոններով պայմանավորված ռիսկերին ավելանում է նաև Արցախի ներքին կյանքի հիմնախնդիրների սրումը և ներքաղաքական ապակայունությունը: Իսկ ահա լայն տարածաշրջանում և Հայաստան-Ադրբեջան միջպետական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործընթացում նորանոր զարգացումներ են տեղի ունենում, որոնք մեծապես խորացնում են Արցախի մարտահրավերներն ու գոյաբանական վտանգները: Ահա այս ճակատագրական զարգացումները դրդեցին ինձ խոսել Արցախի քաղաքացիների և ամբողջ հայ ժողովրդի հետ՝ ուղերձի ձևաչափով:

Արտաքին քաղաքական և անվտանգային ուղղություններում այժմ առկա են մի շարք գործոններ, որոնք ուղղակիորեն ազդում են Արցախի ժողովրդի ներկայի ու ապագայի վրա: Կուրսի դրանցից առանձնացնել հետևյալները.

- Արցախի ավելի քան հնգամսյա շրջափակումը՝ փուլ առ փուլ ահազանցող հունամիտար ու քաղաքական մարտահրավերներով և անվտանգային սպառնալիքներով.
- Արցախի կենսական նշանակության ենթակառուցվածքների շարունակական խափանման հետևանքով հունամիտար վիճակի վատթարացումը և ռիսկերի մեծացումը.
- Ադրբեջանի կողմից Արցախի հանդեպ ռազմական նոր ագրեսիայի ռիսկի շարունակական աճը և էքսիկ գտման իրականացման անթաքույց նկրտումները.
- 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված՝ Արցախի ժողովրդի անվտանգության ռուսական երաշխիքների լրջագույն ճեղքումը.
- Ռուս-ուկրաինական հակամարտությանը պայմանավորված՝ տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածության և Ադրբեջանի ագրեսիվության աճը.
- Միջազգային իրավակարգի շարունակական թուլացումը և միջազգային հանրության ձախողումը Արցախի ժողովրդի անվտանգության ու հիմնարար իրավունքների ապահովման, ինչպես նաև՝ միջազգային դատարանների որոշումների կատարման հարցում.
- Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի դիրքերի շարունակական թուլացումը և Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելուն ուղղված քայլերը:

Հաշվի առնելով վերոնշյալ և այլ էական գործոնները՝ դիմում եմ.

- Արցախի իմ հայրենակիցներին՝ չլիստավել և պատրաստ լինել պայքարի շարունակությանը՝ մի կողմ թողնելով ներքին տարածայունությունները և մեկ բռունցքի պես վճռական կերպով ծառայել նույն նպատակին՝ Արցախի ամրացմանն ու զարգացմանը: Ուրախ եմ, որ այդ հարցում Արցախում առկա է լրիվ միասնական մոտեցում: Այդ առումով, ողջունելով Արցախի Հանրապետության Ազգային ժողովի երեկվա հայտարարությունը ՀՀ վար-

չապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված մտքերի վերաբերյալ՝ ընդգծում եմ, որ մեզ համար անընդունելի է Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը և դրա իրացման փաստն անտեսող ցանկացած հայտարարություն և փաստաթուղթ: Արցախը չի՝ եղել և չի՝ լինելու Ադրբեջանի կազմում, քանի որ դա է մեր ժողովրդի կամքը, որն ունի բավարար վճռականություն՝ իր իրավունքների ու շահերի համար պայքարելու:

Վստահ եմ, որ պայքարող միայնակ չի մնում, և ոչ միայն համայն հայությունն է շարունակելու սատարել մեր պայքարին, այլև միջազգային դաշտում նույնպես կգտնվեն արժեքահեն աջակիցներ: Այո՛, իրավիճակը ծանր է, բայց ո՛չ՝ անելանելի, և Արցախի իշխանությունները կատարում և կատարելու են հնարավոր գործնական քայլերը արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու ուղղությամբ:

• Հայաստանի Հանրապետության ժողովրդին՝ ակտիվ ու վճռական կերպով ապացուցել, որ Արցախը չի կարող ճանաչվել Ադրբեջանի մաս և շարունակում էք տեր կանգնել հայոց միասնական հայրենիքի այս կարևորագույն կտորին: Վերջվերջը, Արցախը բոլոր հայերի հայրենիքն է՝ իր բառաշիկ նշանակությամբ թե՛ հայոց պետականության և թե՛ հայ ազգի համար: Հայաստանի ժողովուրդն է Հայաստանի Հանրապետության տերը, և ինքն էլ պետք է վճռի նման համազգային ու կարևորագույն նշանակության հարցերը:

• Սփյուռքի մեր հայրենակիցներին՝ թոթափել հիասթափության, անզորության ու անտարբերության զգացողությունը և քաղաքացիության երկրների կառավարություններից ու Հայաստանի Հանրապետությունից պահանջել գործնական քայլեր Արցախի ինքնորոշման իրավունքի և անվտանգության երաշխավորման ուղղությամբ: Ակնկալում եմ, որ յուրաքանչյուր սփյուռքահայ անհատ ու կառույց բոլոր հնարավոր միջոցները կծեռնարկեի՝ աջակցելու Արցախին և զսպելու ադրբեջանական հանցավոր գործողությունները: Սփյուռքն ունի չիրացված հսկայական ներուժ, որն ի գործ ու է լրջագույն հաջողություններ ապահովել Հայրենիքի համար ճակատագրական հարցերում:

• Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ձեռնպահ մնալ Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու որևէ գործողությունից ու հայտարարությունից՝ հավատարիմ մնալով ներպետական ու միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններին և համազգային իդեոլոգիան ու շահերին: Գիտակցելով հետպատերազմյան ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության խոցելի վիճակը՝ մենք ըմբռնումով ենք մոտեցնել տարբեր զարգացումների և գիտակցաբար կրել ու կրում ենք բազմաթիվ զրկանքներ՝ չեզոքացնելու համար մեզ ճնշելու միջոցով Հայաստանի Հանրապետությանը զիջումներ պարտադրելու բոլոր փորձերը: Սակայն կան հստակ սկզբունքներ ու կարմիր գծեր, որոնց խախտումներն անընդունելի և անթույլատրելի ենք համարում: Եվ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելն այդ կարմիր գծերից է, որը, վստահ եմ, համայն հայության գերակշիռ մասի համար մնում է այդպիսին: Արցախին առնչվող գործողություններում ու դիրքորոշումներում Հայաստանի Հանրապետության համար գլխավոր ուղեւորները պետք է լինի Արցախի ժողովրդի կամարտահայտությունը, որն աներկբա կերպով դրսևորվել է անկախության և սահմանադրական հանրաքվեներով՝ Հայաստանի Հանրապետության և ողջ հայ ժողովրդի անվերապահ սատարմամբ: Իսկ Հայաստան-Ադրբեջան միջպետական հարաբերությունների կարգավորումը չի կարող տեղի ունենալ ադրբեջանա-դարաբաղյան հակամարտությունից լրիվ անջատ տրամաբանությամբ և Արցախի ժողովրդի կենսական իրավունքների ու շահե-

րի հաշվին, որոնք, ի դեպ, կազմում են համայն հայ ազգի կենսական իրավունքների ու շահերի անբաժանելի ու կարևոր մասը:

• Ռուսաստանի Դաշնության իշխանություններին և անձամբ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ապահովել նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները՝ բացելով Լաչինի (Քաշաթաղի) միջանցքը, վերացնելով ադրբեջանական բոլոր խոչընդոտները, ազատելով Արցախի 120.000 բնակչությանը ահաբեկչական պատանդառությունից և կանխելով ադրբեջանական ագրեսիվ գործողությունները Արցախի ժողովրդի հանդեպ: Անկախ եռակողմ հայտարարության մյուս կողմերի գործողություններից՝ Ռուսաստանը ստանձնել է հստակ պարտավորություններ, որոնք լրջագույն հիմք են եղել պատերազմից հետո Արցախի ժողովրդի վերադարձի ապահովման համար: Ուստի մենք ակնկալում ենք այդ պարտավորությունների անշեղ ու վճռական կատարում՝ հանուն Արցախի ժողովրդի և Ռուսաստանի Դաշնության շահերի, ինչպես նաև՝ հայ ու ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության:

• Ադրբեջանի ժողովրդին ու իշխանություններին՝ վերջ տալ Արցախի ժողովրդի հանդեպ ստեղծված և ցեղասպանական քաղաքականությանը, պատրաստ լինել իրապես ընդունելու ժողովուրդների իրավահավասարության սկզբունքը և Արցախի հանդեպ բնիկ հայ ժողովրդի տիտղոսն ու իրավունքները: Մենք պատրաստ ենք միջազգային ձևաչափով երկխոսության, հակամարտության կարգավորման և խաղաղության, սակայն միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների, հատկապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, վեճերի խաղաղ կարգավորման և տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա: Մենք որևէ սպառնալիք չենք ներկայացնում Ադրբեջանի հանդեպ, սակայն, մյուս կողմից, Արցախի ժողովուրդն ունի ինքնապաշտպանության իրավունք, իսկ Արցախի Հանրապետությունը՝ սեփական ժողովրդին պաշտպանելու պարտավորություն: Չնայած Ադրբեջանից եկող մշտական սպառնալիքներին՝ վստահ եմ, որ խաղաղ ու արժանապատիվ միջավայրի կերտումը և դարավոր թշնամության ավարտը բխում են մեր ժողովուրդների շահերից ու ձգտումներից:

• Միջազգային հանրության բոլոր դերակատարներին և հատկապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ առաջնահերթորեն ապահովել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2023թ. փետրվարի 22-ի որոշման պատշաճ կատարումը Ադրբեջանի կողմից, ինչպես նաև անհրաժեշտ գործիքակազմների կիրառմամբ երաշխավորել Արցախի ժողովրդի անվտանգությունը՝ ՄԱԿ-ի սկզբունքներին ու նպատակներին համապատասխան:

Միքելի հայրենակիցներ Կուրսի անդրադառնալ նաև ներքին կյանքին առնչվող որոշ հարցերի: Պատերազմից հետո Արցախը ժամանակ առ ժամանակ հայտնվում է ներքին վայրկյալներում հորձանուտներում, սակայն այս ընթացքում մեզ հաջողվել է ընդհանուր առմամբ ապահովել ներքին համերաշխության ու կայունության որոշակի մակարդակ: Տարբեր քաղաքական ուժեր ու դերակատարներ տարբեր պահանջներ են ներկայացնում, երբեմն՝ հիմնավոր, երբեմն՝ ոչ: Այս ընթացքում իմ գործունեությունը քննադատվել է ամենատարբեր շրջանակների կողմից մի մասն օբյեկտիվորեն ու անկեղծորեն, մյուս մասը՝ սուբյեկտիվ և ուղղորդված կերպով: Կարևոր է արձանագրել, որ երբեմն արտաքին տարբեր ուժեր ևս փորձում են խթանել ներքին ցնցումները Արցախում, ինչը լրացուցիչ լարվածության պատճառ է դառնում:

Այնուամենայնիվ, անկախ քննադատությունների ու պահանջների բովանդակություն-

նից ու նպատակներից, ներքին իրավական կարգավորումների շրջանակներում ես կատարել եմ առավելագույնը՝ ապահովելու փոխադարձ հարգանքի ու երկխոսության քաղաքական միջավայր և մեզ համար այնքան անհրաժեշտ ներքին կայունություն: Այո՛, երբեմն դա արել եմ շատերի համար անսպասելի չափի հանդուրժողականությամբ, բայց արդյունքում կարողացել ենք գերծ պահել Հանրապետությունը կործանարար ցնցումներից ու ներքին սուր բևեռացումից:

Վերջին օրերին Արցախում կրկին կատարվել են ներքաղաքական լարվածություն առաջացնելու փորձեր: Տարբեր քաղաքական ուժեր և անհատներ իրենց հայտարարություններով, գործողություններով կամա թե ակամա ստեղծում են ներքին անհամերաշխության ու ապակայունության լրացուցիչ պայմաններ:

Քննարկվել են սահմանադրական փոփոխություններ, ընտրությունների կազմակերպման հետ կապված հարցեր, Ազգային ժողովի նախագահի կողմից հնչել է նախագահի վստահության հանրաքվե անցկացնելու և պետական կառավարման նոր մարմին ստեղծելու մասին առաջարկ:

Ես ամենակն կառչած չեմ նախագահի պաշտոնից, հանուն Արցախի Հանրապետության ժողովրդի անվտանգության՝ պատրաստ եմ համագործակցության ցանկացած կարող ուժի ու անհատի հետ և իմ գործունեության ընթացքում փորձել եմ անել ամենը, որ այդպիսի երևույթները գնահատվեն որպես սովորական, ժողովրդավարական երկրների բնորոշ գործընթացներ: Բայց, մյուս կողմից, Արցախում սահմանադրական կայուն կարգը, ներհասարակական համերաշխությունն ու պայքարի համընդհանուր ոգին անսակարկելի արժեքներ են, որոնց պաշտպանության թիվ մեկ պատասխանատուն ես եմ:

Պարզ է, որ մեր շուրջը տեղի ունեցող գործընթացներից ամենատեղեկացվածը նույնպես ես եմ, ինչը ինձ տալիս է դրանք բազմակողմանի ու առավել համընդգրկուն գնահատման ենթադրություն: Ինչպես նաև՝ անսակարկելի արժեքներ են, որ հաճախ, հանուն երկրի ներքին խաղաղության ու համերաշխության, ինձ դրո՞ւմ է համագործակցության այնպիսի քայլերի, որոնք շատերի կողմից, կրկնում են, անհասկանալի են թվում: Այդուհանդերձ, ոչ մի պարագայում թույլ չեմ տալու ներքին կործանարար իշխանատենություններին, ամենակամ նկրտումների բավարարման փորձերը: Այս մոտեցումը որդեգրել եմ՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, քաղաքական խորհրդակցությունները, վերջին օրերին հասարակության բազմաթիվ ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում նրանց կողմից ներկայացված պահանջները, իմաստուն գնահատականները և ներքին կայունության ու ամրության առանձնահատուկ կարևորումը:

•• Արցախի Հանրապետությունում կառավարումը կարող է իրականացվել բացառապես Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջոցով:

• Պատրաստ եմ բոլոր խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի հետ համագործակցության, որոնք ունեն պետության ներքին ու արտաքին քաղաքականության առնչությամբ տեսակետներ, գաղափարներ ու առաջարկներ: Այդ համագործակցության ինստիտուցիոնալ հիմնական հարթակը Անվտանգության խորհուրդն է, որտեղ, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա կարող են իմ կողմից հրավիրվել բոլոր ուժերի ներկայացուցիչները՝ առանց բացառության:

• Այսպիսի ճգնաժամային ծանր պայմաններում դադարեցնում եմ արտահերթ նախագահական և խորհրդարանական ընտրություններ կազմակերպելու շուրջ բոլոր տեսակի քննարկումները, ինչպես նաև՝ վերջին օրերին Ազգային ժողովի նախագահի կողմից առաջարկված վստահության հանրաքվե

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԶՈՒՆԵՆ



Այս խորագիրն էր կրում «Արցախի Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրի և Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի համատեղ ուժերով կազմակերպած միջոցառումը՝ նվիրված հայ ժողովրդի մայիսյան փառահեղ հաղթանակներին: Ներկա էին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը, պետմայրաքար Գուրգեն Ներսիսյանը, առաջին տիկին Քրիստինե Հարությունյանը, պետական այրեր, գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայրենական մեծ պատերազմում, Հայոց պետականության կերտման և Արցախյան գոյապայքարի բոլոր մարտերում ընկած հայորդիների վառ հիշատակը:

Գիտակրթական համալիրի սաներն անդրադարձան հայոց պատմության մայիսյան փայլուն հաղթանակներին, որոնք վաղեմության ժամկետ չունեն, քանի որ հայ քաջորդիները ձեռք են բերել կյանքի ու արյան գնով՝ ապավինելով խաչին ու զենքին: Նրանք ներկայացրին հայության մաքառման ճանապարհը Ավարայրից մինչև Հայաստանի առաջին հանրապետություն, Առաջին աշխարհամարտից մինչև Շուշիի ազատագրում, Պաշտպանության բանակի ստեղծում: Հայի հավաքական գիտակցության մեջ Մայիսի 9-ը ամրագրվել է որպես մեր մեծագույն նվաճումների ամիս:

կազմակերպելու շուրջ մտքերի փոխանակումները: Հորդորում են վերջ տալ ներքաղաքական այրօրինակ գործընթացներին, որոնք կարող են վտանգել մեր երկրի ներքին կյանքի կայունությունը, կրկին ձևավորել ճամբարներ, ինչը մերօրյա պայմաններում անընդունելի է: Միաժամանակ վերահաստատում են դեռևս 2020թ. դեկտեմբեր ամսում հնչեցրած հրապարակային խոստումն՝ բարենպաստ պայմանների առկայության առաջին իսկ դեպքում հրաժարական տալու և նախագահական ու խորհրդարանական արտահերթ ընտրություններ կազմակերպելու մասին, որին ես չեմ մասնակցելու:

Սահմանափակելու են հավաքների ազատությունը: Անընդունելի են համարում հատկապես այսպիսի վտանգների պայմաններում, առանց քաղաքական հավասարակշռման, առանց Արցախի Ժողովրդի համար հետևանքներն ու մեր երկրի շահերի վրա ազդեցությունը լիարժեք գնահատելու՝ այս կամ այն քաղաքական ուժի կամ խմբի կողմից գործողությունները՝ ուղղված Արցախի անվտանգության հարցում կարևոր նշանակություն ունեցող սուբյեկտների դեմ: Պետական մարմինները գործում են անկաշկանդ, ղեկավարվում են բացառապես Արցախի Հանրապետության ժողովրդի շահերով և մնան հայտարարությունների, կոչերի անհրաժեշտության դեպքում, պատրաստ են ստանձնել այդ պատասխանատվությունը:

Արցախի Հանրապետության իրավապահ մարմիններին, մասնավորապես՝ ազգային անվտանգության ծառայությանն ու ոստիկանությանը հանձնարարում են՝ ուժեղացնել հասարակական անվտանգության պահպանությանն ուղղված ջանքերը և ցանկացած օրինախախտման դեպքում ցուցաբերել համարժեք արձագանք՝ խախտում թույլ տված անձանց ենթարկելով պատասխանատվության: Ներքին կարգապահությունը պետք է լինի մեզանից յուրաքանչյուրի վարքագծի անբաժանելի մասը, որի ապահովման պարտականությունը կրում են իրավապահները:

Այդ ամենի առնչությամբ հայտարարում են հետևյալը.

Ապահովել ռազմական դրության պայմաններում տեղեկությունների հրապարակման հատուկ կարգով սահմանված պայմանները: Իսկ խախտումներ թույլ տվող և երկրի անվտանգությանն առնչվող տեղեկություններ հրապարակող անձանց ենթարկել պատասխանատվության և ապահովել այդ գործընթացի անհրաժեշտ հրապարակայնություն, որպեսզի բոլորին պարզ դառնա, որ նման արարքներն անթույլատրելի, անօրինական ու դատապարտելի են:

Սիրելի հայրենակիցներ
Բոլորին հայտնի է ու անհերքելի, որ 2020թ. 44-օրյա պատերազմից հետո ես ունեցել եմ ամենամեծ պատասխանատվությունը, սակայն, այդքանով հանդերձ, երբեք չեմ խուսափել պատասխանատվությունից և շարունակաբար աշխատել եմ պետականապահականության ուղղությամբ: Այսօր ևս շարունակում եմ կրել իմ բաժին պատասխանատվությունը՝ ստանձնած ժողովրդի բարձր քվեով, նպատակ չունեմ խուսափել դրանից և բաց եմ համագործակցության ցանկություն ունեցող բոլոր ուժերի ու անձանց համար, ովքեր պատրաստ և կարող են ստանձնել ու կրել իրենց բաժին պատասխանատվությունը:

Այս ծանր պայմաններում մենք բոլորս պետք է մեր ուշադրությունը սևեռենք բացառապես արտաքին մարտահրավերների հաղթահարման ջանքերի վրա, և ներքին որևէ գործընթացով չպետք է նպաստենք մեր հակառակորդների նպատակների կյանքի կոչմանը: Հավաստիացնում եմ, որ մեզանից կախվածոր հնարավորինս կատարում ենք շրջափակման վերացման և դրա հետևանքների մեղմացման ուղղությամբ, և այդ ջանքերի մասին պետական լիազոր մարմինները հնարավորության սահմաններում պարբերաբար իրազեկում են հասարակությանը:

Վստահ եմ, որ մենք կկարողանանք միասնականությամբ, ներքին համերաշխությամբ ու քրտնաջան աշխատանքով, մեր թիկունքին ունենալով Հայաստանի Հանրապետության ու համայն հայության սատարումը, կանխել արտաքին ու ներքին սպառնալից գարգացումները և ապահովել Արցախի հայկական, ազատ, անվտանգ ու արժանապատիվ ապագան:

- Արցախի ժողովրդի ուժն իր կամքի, միասնականության և իմաստնության մեջ է:
- Լինենք արժանի մեր սուրբ մահիկների:
- Լինենք պատասխանատու մեր հաջորդ սերունդների առջև:
- Ամրություն և խոհեմություն մեր ժողովրդին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԳԾԻ ՊԱՆՈՒՄՆԵՐԸ

Այսօր ներկա էի հարազատ կրթության կամարների տակ հնչող Վերջին զանգի արարողությանը, որն ինչքան էլ փորձ արվեց ուրախության պսակով պատել, այնուամենայնիվ, չստացվեց: Թախծի ու ցավի նժարը իջնում էր վար... Առաջին մեծ ցավն ապրեցի նրանով, որ տոնակառույցն զարդարված բեմահարթակում ընդամենը չորս շրջանավարտ էին՝ երեք աղջիկ ու մեկ տղա: Նախկինում այդ բեմահարթակը նեղ էր շրջանավարտների համար, և ուրախությունն էլ կատարյալ էր: Ո՛ր կորան երանելի օրերը, ո՞վ հնչեցրեց մեզ համար՝ զանգն է իզուր...

Ո՞ր չար լեզուն քեզ անիծեց, Ո՞ր չար ձեռքը քեզ հեշտ հանձնեց, ճակատագրի հեզմա՞նք էր սա, Թե՞ չար կատակ մի անխնա...

Արցախյան բարբառով հնչող կատակներն ու փոքրիկ բեմադրությունները շատ ճաշակով էին ընտրված: Ամեն, ամեն ինչ համ ու հոտ ուներ, բայց հոգի չունեին: Ներքին ցավն ուզում էր պոռթկալ ամեն մի սրտից: Ուզում էին ուրախ ձևանալ թե՛ բեմում, թե՛ դահլիճում, բայց չէր ստացվում: Հուզմունքը խեղդում էր՝ մահվան օղակի պես սեղմելով կոկորդը:

Այդուհանդերձ, շրջանավարտն ուրախ է այսօր, որ դժվարին քննություն հանձնելուց հետո կյանքի բարդ ճանապարհ է անցնելու ու չի երկնչում դրանից (արցախցի է, չէ՞. մա ե՞րբ է ընկրկել): Այդ չորս շրջանավարտներից մեկը՝ Նաթելան, իրավաբան է դառնալու՝ Արցախյան «թնջուկը» լուծելու ակնկալիքով, մյուսը՝ Մարիան, իր երազանքի ներկայանալը ծառայեցնելու է Արցախի գույներն ավելի վառ պատկերելու ու աշխարհին ի ցույց դնելու նպատակով, երրորդը՝ Գոհարը, ԵՊՀ-ում սոցիալական աշխատանք է ուսումնասիրելու՝ Արցախի սոցիալական հարցերն արդարաստակամբ, իսկ չորրորդը՝ Գուրգենը, զինվոր է դառնալու, հայրենիք է պաշտպանելու: Նրանք ամեն ինչ արդեն անել են և արժանացել են արժանապատիվ կրթության: Նա չի կարող հանդուրժել, որ իր պատերի ու հայրերի ազատագրած հայրենիքի ճակատագիրը վտանգված լինի, և ինքն է վերադարձնելու:

տանք է ուսումնասիրելու՝ Արցախի սոցիալական հարցերն արդարացիորեն վճռելու պատրաստակամությամբ, իսկ չորրորդը՝ Գուրգենը, զինվոր է դառնալու, հայրենիք է փրկելու բորենիների ոհմակից, որը փորձում է արնաքամ անել մեզ: Նա չի կարող հանդուրժել, որ իր պատերի ու հայրերի ազատագրած հայրենիքի ճակատագիրը վտանգված լինի, և ինքն է վերադարձնելու:



կորսված երկրի ամբողջականությունը: Այսպես կատակն ու լուրջը իրար խառնած՝ շրջանավարտն ապագային նայում է լուսավոր հայացքով, քանզի խորը խրված արմատներ ունի և հավատարիմ է այդ արմատներին:

Այսօր մեր ազգի համար կրթությունն ու գիտությունը դարձել են առաջնագիծ, իսկ մանկավարժները՝ այդ առաջնագիծի ամուր պահապանները: Ամեն ինչ կախված է լինելու նրանից, թե ինչպես է պահպանվում այդ առաջնագիծը, ովքեր են լինելու նրա արթուն պահակները: Այս հանգամանքը հաշվի առնելով են իրենց բարեմարտանքի խոսքերը հյուսում խնայատի Արթուր Հայրապետ-

յանի հերոսական անունը կրող կրթօջախի մանկավարժները, դատելով Վիկա Գասպարյանն ու տնօրեն Լյուդմիլա Մոսիյանը, որոնք, գյուղի հերոսական պաշտպաններին հիշելով, շրջանավարտներին կոչ էին անում ամեն ինչից առավել սիրելի հայրենիքը և պատրաստ լինել ամեն տեսակի զոհողության:

Այս սուրբ հողը հազարամյակներ շարունակ շնչել է հայերեն, և վայել չէ մեզ, որ ինչ-որ վաչկատուն ցեղախումբ փորձում է տիրանալ նրա հողերը ու մշակութային արժեքներին՝ անտեսելով իրավական բոլոր նորմերը:

Մեր կրթական առաջնագծի պահպանման ամենամեծ առաքելությունը սա՛ պիտի լինի: Մեր սերունդը անխոցելի պիտի դառնա միայն ու միայն գիտականապես. դրանից են բխում մյուս հավելյալ ու առաջնային հարցերը բոլոր ոլորտներում: Հայ ժողովրդի առջև ծառայած բոլոր խնդիրների բանալին այդ առաջնագծի պահպանմանն է:

Ուրեմն՝ ի զեն, ազգի՛ պահապաններ: Ձեր լույսով են բացվելու մեր կյանքի մութ ու անհայտ շերտերը, լույս սփռեք ամենուր, որի շողերից կկուրանան բոլոր ոսոխները:

Մի խնայեք ձեր ուժն ու ավյունը, օրն ու ժամանակը միշտ կանգուն եղեք ձեր դիրքերում, որ անառիկ մնան հայրենի սահմանները:

Համբերատարությամբ կահավորեք մեր սուրբ «առաջնագիծը», որ կանգուն մնան երկրի այրուները, անառիկ՝ սահմանները: Շնորհավոր տոնդ, «Շրջանավարտ-2023», բարի՛ երթ դեպի լուսե ապագա:

Սեփ. լրատվություն

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԵՐՈՒՆԴ

ՆԿԻՐՎԱԾ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ

1918թ. մայիսի կեսերից Արևելյան Հայաստանում՝ Սարգարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում տեղի ունեցած հերոսամարտերում մեր ժողովուրդը միասնության ու երկրին տեր լինելու կամքով կարողացավ հաղթել թուրքական զորքին և կերտեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Այդ օրերի հերոսամարտերին էր նվիրված Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան թիվ 199 հիմնական դպրոցում կայացած ցերեկույթը: «Իմ հերոսը», այսպես էր կոչվում փոքրիկ պիեսը, որի հեղինակն ու բեմականացմողը դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ, 8-րդ «բ» դասարանի աշակերտուհի Շողեր Հակոբյանն էր, որը նաև մարմնավորեց գլխավոր դերերից զինվորի մոր կերպարը: Արցախյան վերջին պատերազմի մասին էր պատմում «Իմ հերոսը» բեմականացումը: Ձինվոր որդին՝ Գոռը, նոր է վերադառնում բանակից, սակայն շուտով հնչում է տագնապ, սկսվում է պատերազմը: Ձինվորի տուն են գալիս ընկերները՝ պատրաստ մեկնելու առաջնագիծ, ու դարձյալ ռազմի դաշտ է գնում զինվորը, որին մարմնավորում էր 8-րդ «բ» դասարանի աշակերտ Գևորգ Գալեյանը: Նրա հորեղբայրը՝ Արմեն Գալեյանը, նահատակվեց Արցախյան 44-օրյա պատերազմում: Ձինվորի մայրը (դերում՝ Շ.Հակոբյան) և հայրը (դերում՝ Էդգար, 9-րդ «բ» դասարան), իրենց որդուն պատգամում են տեր կանգնել հայրենի հողին: «Տղես, համարձակ եղիր, որ տեր կանգնես քո բաժին հողին», - ասում է հայրը: Մայրն էլ է քաջալերում որդուն՝ ասելով. «Թշնամին նույնն է, ծրագիրը չի փոխվել, երբեք չզգարիր...»: Օրինում են ծնողներն իրենց զավա-

կին ու մարտադաշտ ուղարկում՝ հավատով՝ հայ զինվորը տեր է կանգնելու Հայրենիքին: Բեմականացման ընթացքում նկարագրվում է նաև Երևանի սրճարաններից մեկը, որտեղ երիտասարդը հանգիստ սուրճ է ըմպում



և հանգիստ ու անվորդվ հեռախոսով գրուցում, կարծես պատերազմ չկա: Ձինվորի մայրը սրճարանում ներկայանում է հորդորում է՝ մարդ մնալ, հոգով՝ զինվորների կողքին: Ձինվորի մորը թիկունք են հարևանները, ովքեր հավատում են նաև հաղթանակին: Փիլիսոփայում են պատերազմի մասին՝ երանի տալով, որ այն էլ լինի ամենի պես ու շուտ ավարտվի: Խոսում են անմահացած զինվորների մասին, ովքեր արդեն երկնքում են: Ասում են՝ այլևս շատ տղաներ չեն սիրահարվելու, շատ աղջիկներ չեն հավատա սիրուն: Իսկ զինվորի մայրը հոգով ու մտքով որդու հետ է, որը պատերազմի դաշտում է, ու մտածում է. «Տեսնես Գոռս ի՞նչ է անում, հաց կերա՞վ...»: Այդ պահին ներս է մտնում Գոռի մարտական ընկերը՝ բերելով մամակ, որտեղ գրված է՝ երբ ստանաս մամակը, ես

չեմ լինելու: «Ման, կներես, ես պետք է քեզ ծաղիկներ բերեի, սակայն դու ես ինձ բերելու եռաբլուրում: Շիրիմիս այցելելիս սև շոր չհագնես. դու հերոսածին մայր ես...»: Վերջապես ավարտվում է պատերազմը, բայց այլ է

կին համահունչ: Ցավ հայտնեց հազարավոր նահատակ տղաների համար: Նշեց նաև՝ կան դեռ մարդիկ, որ նույնիսկ եռաբլուրի տեղը չգիտեն: Այսօր այսպիսի միջոցառումն ուղղակի անհրաժեշտություն է: Ես իմ էդ օրերը հիշեցի՝ ո՞նց էի սպասում, երբ երեխան (Վարդանը) գոհվել էր: Եվ իսկապես, երբ զանգում էր ու ասում, որ իրենց մոտ խաղաղ է, ես զարմանում էի՝ էս թոհուրեհի մեջ ո՞նց է՝ իրենց մոտ պատերազմ չկա:

Ինչի՞ց բխեց այս ամենը: Երեկ տաքսու վարորդը՝ ջահել, հաղթանակաբեր էրիտասարդ, թուփն մեկ հարցնում է՝ էդ որտե՞ղ ա եռաբլուրը...»: Դպրոցի տնօրեն Վ. Բեջանյանն իր ելույթում շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր աշխատել են, որ կայացավ բեմականացումը: «Ձեր խաղով լավ դաս տվեցիք նաև ավագներին: Միայն հիշելով չէ, որ մեծարենք անմահ հերոսներին, նաև աշխատել, գործել է պետք՝ հայրենիքին տեր մնալու համար»,- ասաց Վ. Բեջանյանը: Ծնողներից Շողերի տատը՝ Սուսաննա Թադևոսյանը, նույնպես ողջունեց բեմականացումը՝ նշելով, որ հայրենասիրությունը մանկուց պետք է սերմանենք մեր երեխաների մեջ, այսպես դժվար է լինելու պահել հող-հայրենին:

Դահլիճում ներկա էր նաև Իրաքից հայրենիք վերադարձած Սյուզան Ֆրանգյուլյանը, որի պապերը Վանից են գաղթել Մեծ Եղեռնի օրերին: Այժմ Իրաքում են քնակվում նրա 2 եղբայրը, որոնցից Սամվելը մասնակից է եղել Իրաք-Իրան պատերազմին 1980-ական թվականներին: Ասաց, որ տավաղված է մեր աշակերտների խաղով:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՄԱՅԻՍԻ 28-Ը ԲՈՒՏԱՎՈՒՄ

Մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օրը, ինչպես հայկական ամեն մի գյուղում ու քաղաքում, այնպես էլ Քոլատակում նշվեց մեծ ոգևորությամբ: Արցախյան գոյամարտից հետո գյուղում բավականին մեծ աշխուժությամբ տոնում էին թե՛ Հայոց բանակի, Հայրենյանց պաշտպանի օրը, թե՛ ԼՂՀ հռչակման օրը և, հիարկե, Մայիսյան եռատոնն ու Հայաստանի Առաջին Հանրապետության օրը: Սակայն 2020թ. 44-օրյա պատերազմից հետո գյուղը կարծես լռակյաց կյանքի էր անցել: Այդ տոներին ամեն ոք մի փունջ ծաղիկ էր խոնարհում զոհածների հուշակոթողին և հեռանում: Իհարկե, գյուղացիներն իրենց առօրյա կյանքն էին վարում, բայց նախկին շունչն էլ չէր զգացվում: Միայն վերջերս նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի այցը Քոլատակ գյուղ և պատրաստակամությունը գյուղում բնակվելու, մի նոր հույս էր արթնացրել ժողովրդի մեջ: Նրա այս քայլը ոգևորեց ժողովրդին՝ էլ ավելի ամուր կառչելու սեփական հողին և արարելու նույն այդ հողում:

Այս տարի Հայաստանի Առաջին Հանրապետության օրն առանձնացավ հետպատերազմյան շրջանին հաջորդած բոլոր օրերից: Պատերազմից հետո գյուղի հանդիսությունների սրահում մարդիկ հավաքվում էին միայն սգո օրերին, բայց մայիսի 28-ին գյուղի բնակիչները հավաքվել էին այդտեղ՝ նշելու Հայաստանի Առաջին Հանրապետության օրը և միաժամանակ ծանոթանալու իրենց նոր բնակչի հետ:

Հավաքույթն անցավ բավականին ջերմ մթնոլորտում: Կենացներից և քաղցր զրույցներից բացի շնորհաշատ երեխաները և երիտասարդներն օրը ավելի հիշարժան դարձրին հայրենասիրական երգերով:

Շնորհակալություն Ռուբեն Վարդանյանին մեր սքանչելի գյուղն ընտրելու, մեր պարզ ու հասարակ գյուղի բնակիչների կողքին ապրելու պատրաստակամության համար: Կարծում են՝ նրա այս քայլին կհետևեն շատերը, որ Արցախում դատարկ տներ չմնան:

Սուսաննա ԱՐԱՍՅԱՆ
Քոլատակի միջև. դպրոցի ուսուցչուհի

ՄԵՐ ԿՅԱՆՔՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՂՆԵՐԸ

Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության միջազգային օրն է, որը, շրջափակված Արցախում տոնական գույներ ունենալով հանդերձ, ուղեկցվեց աշխարհին ուղղված բողոքի կոչով, քանզի Արցախի Հանրապետության շուրջ 30 հազար երեխաների համար խախտված են միջազգայնորեն ընդունված՝ կյանքի, բավարար կենսապայմաններ ունենալու, կրթության, մշակութային արժեքների հաղորդակցվելու, հանգստի, բժշկական ծա-

թյան շրջանը: Արցախից երեխաների բառապաշարում ակտիվ են «պատերազմ», «շրջափակում», «խաղաղություն» բառերը, ինչը չի կարելի համարել նորմալ երևույթ: Դրա համար մեծերը, չնայած շրջափակման պայմաններին, ձգտում են երեխաների տոն օրը հնարավորինս գունագործել գեղեցիկ միջոցառումներով՝ ձգտելով ստեղծել անհոգ մանկության տպավորություն: Արցախի ոչ միայն մայրաքաղաքում, այլև շրջկենտրոններում, գյուղերում, դպրոցներում ու մանկապարտեզներում այդ օրն ուրախ միջոցառումներ կազմակերպվեցին: Իսկ Ստեփանակերտի մշակույթի և երիտա-



սարդության պալատում կայացավ տոնական համերգ՝ մայրաքաղաքում գործող բոլոր 10 մանկապարտեզների սաների մասնակցությամբ: Յուրաքանչյուր այդ փառատոնը մախածոնել է ԱՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության մշակույթի և սպորտի նախարարության բաժնի: Յուրաքանչյուր նախարարական հիմնարկ յուրովի էր պատրաստվել ամենամյա այդ ստուգատեսին: Երեխաների անկաշկանդ ելույթները բեմից, որոնց հանդիսատեսները մեծեր ու երեխաներ էին, ակնառու արտացոլում էին մանկապարտեզների աշխատակիցներ, ինչու չէ, նաև ծնողների ջանադիր աշխատանքի և ԱՀ ԿԳՄՍՆ նախարարական

բաժնի սրտացավ կառավարման մասին՝ փոքրիկ արցախցիների միջոցով աշխարհին ցույց տալու, որ Արցախն ապրում է և շարունակելու է ապրել իր հնամյա հողում:

Նախարար Նորայր Մկրտչյանը շնորհավորեց փոքրիկներին ու մեծերին օրվա առթիվ, մասնակից երեխաներին և մանկապարտեզների ներկայացուցիչներին հանձնեց նվերներ:

Անհոգ մանկություն պարզապես մեր երեխաներին, քանզի նրանք են թեև տալիս մեծերին, իմաստավորում կյանքը, կանխորոշում Արցախի ապագան:

Սեֆ. լրատվություն



նայություններից օգտվելու, անվտանգության և շատ այլ իրավունքներից: Արցախում երեխաները շուտ են մեծանում, ավելի ճիշտ, արագ են թթափում մանկու-

սարդության պալատում կայացավ տոնական համերգ՝ մայրաքաղաքում գործող բոլոր 10 մանկապարտեզների սաների մասնակցությամբ: Յուրաքանչյուր այդ փառատոնը



ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏՉԵԼԻ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ՈՐԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տասնամյակներ շարունակ խոսվել ու գրվել է դասագրքերի, առարկայական ծրագրերի տեղեկատվական գերբեռնվածության, ուսումնական նյութերի, աշակերտների հոգեբանական առանձնահատկությունների և ուսումնական հնարավորություններին անհամապատասխան լինելու մասին: Ժամանակ առ ժամանակ փորձ է արվել ուսումնական ծրագրերը բեռնաթափելու, դպրոցական ողջ համակարգն օպտիմալացնելու, դասագրքերն ավելի հետաքրքիր ու մատչելի դարձնելու ուղղությամբ: Սակայն միշտ էլ սկսած գործը կամ ավարտին չի հասցվել, կամ ինչ-ինչ պատճառներով մնացել է նույնը: Նույնիսկ մի ժամանակ պնդում էին, թե 12-ամյա դպրոցական համակարգի ներդրումը հենց այդ նպատակն է հետապնդում: Սակայն այն էական փոփոխություններ և չարձանագրեց:

Քանի որ վերջերս հաճախակի է խոսվում կրթական նոր չափորոշիչների, նաև դասագրքերի (կարծես՝ 2024 թվից) վերահրատարակման մասին, ժամանակն է մեկ անգամ ևս հետադարձ հայացք ձգել կրթության զարգացման ընթացքին, վերլուծել, իմաստավորել արածն ու չարածը, ուղղել սխալները՝ հետագա անխոչընդոտ առաջընթացի համար: Կասկած չկա, և միանգամայն հիմնավորված է, որ հիմնական դպրոցի առաջնահերթ խնդիրներից մեկը՝ երեխայի ընդունակությունների, նախասիրությունների ու հակումների բացահայտումը, դրանց զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է:

Մարդն առհասարակ համակողմանի ընդունակություններ չի ունենում (բացառությունները մի կողմ): Նրա ընդունակությունները որոշակի ուղղություն են ունենում (առկա են նաև ժառանգաբար փոխանցված հատկանիշներ): Այս դրույթների խնդիրները հարթահարելու համար թվում է, թե հոսքային դպրոցների անհրաժեշտությունը ակնհայտ է: Սակայն նման դպրոցները և՛ քիչ են, և՛ հոսքի հիմնական առարկաներից խորացված ուսուցմանը զուգընթաց մյուս առարկաները պետք է որ զգալիորեն բեռնաթափված լինեն: Բայց դա, որքան զիտեն, այդպես է:

Ես մի քիչ շեղվեցի իմ բուն ասելիքից, քանի որ նախընտրել էի անդրադառնալ դպրոցական դասագրքերին՝ հույս ունենալով, որ շատ փորձառու ուսուցիչներ նույնպես ունեն նման մտահոգություններ: Այդ մասին ես համոզվեցի նախընտրած թեմայի շուրջ գրուցելով դպրոցի վաստակաշատ ուսուցիչների հետ: Նախ դասագիրքն է առարկայի՝ բովանդակությունը սովորողի համար բացահայտող, մեկնաբանող, ներկայացնող հիմնական և գլխավոր գիրքը: Դասագրքերը կազմվում են չափորոշիչի և ծրագրերի հիման վրա և պետականորեն գործածության են երաշխավորվում: Առարկայական ծրագրերը ևս կազմվում ու հաստատվում են չափորոշիչի ու

ծրագրերի հիման վրա և պետականորեն գործածության են երաշխավորվում: Առարկայական ծրագրերը նույնպես կազմվում ու հաստատվում են չափորոշիչի հիման վրա:

Դասագիրքն ուսումնառության միջոց է՝ նպաստելու սովորողի կողմից առարկայի ուսումնական բովանդակության յուրացմանը, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նվազագույն մակարդակի ձեռքբերմանը և որոշակի

թյան սկզբունքը: Հենց այս թերության առկայությունն է դասագրքերում, որ վանում է աշակերտներին, չի հրապուրում, կարողացածը դժվար է յուրացվում:

Մեծ բանաստեղծ Ե. Չարենցը գրականագիտությանը և կրթությանը առնչվող հարցերն ամփոփող իր հոդվածներում մեծ տեղ է հատկացրել դասագրքեր կազմելու հարցերին, մասնավորապես՝ լեզվի ու գրականության ուսուցմանը:



արժեքային համակարգի ձևավորմանը:

Դասագրքերում որպես կանոն գետնից է հիմնական տեքստը, այսինքն՝ պարտադիր յուրացման համար նախատեսված նյութը: Բացի հիմնական տեքստից, նույն նյութի շրջանակներում առկա են նաև լրացուցիչ նյութեր՝ նկարներ, սխեմաներ, առաջադրանքներ, հարցեր. շատ հնարավոր է նաև՝ թեմային առնչվող հետաքրքրաշարժ գրույթներ: Եվ որքան նման տեղեկատվությունը պարզեցված, հանրամատչելի է, տարաբնույթ է (շատ դեպքերում՝ ոչ այնքան), առավել նպաստավոր է թեման լավ յուրացնելու համար: Պարզապես պետք է հմտորեն օգտվել այդ ամենից: Բանը այն է, որ դրանք պետք է որ թեթևացնեն բուն տեքստի ծանրաբեռնվածությունը, մեծացնեն ուսումնական գործունեության բազմազանությունը, նպաստեն սովորողի ինքնուրույն ստեղծագործական գործունեության զարգացմանը: Այս լրացուցիչ նյութերը չպետք է լինեն հավելյալ ծավալ և դուրս դասի հիմնական բովանդակությունից, որոնցից հեշտությամբ երես կթեքի սովորողը: Դասագրքերն իրենց մեջ պետք է ներառեն նաև գիտականություն, այսինքն՝ կազմված լինեն տվյալ գիտության արդի մակարդակին համապատասխան:

Այնուհանդերձ, ես այն համոզմանն եմ (իմ սուբյեկտիվ կարծիքն է), որ դասագրքերի գնահատման ամենակարևոր չափանիշը պետք է լինի մատչելիությունը: Եթե ավելի պարզ՝ դասագիրքը որպես ուսուցման միջոց պետք է գրված լինի մասնագիտորեն ճիշտ և մատչելի լինի սովորողի համար: Եթե մասնագիտական առումով դասագիրքը նույնիսկ լինի անթերի, միևնույն է, այն կատարյալ համարել չի կարելի, եթե չի պահպանվել մատչելիու-

ն է եզրակացության գալ: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նմանատիպ մասնագիտական հանձնաժողովներին պետք է վստահել դպրոցական ծրագրերում, չափորոշիչներում կատարվող փոփոխությունները, նախատեսել փորձաշրջան և արդյունքների ամփոփում:

Հիմա՝ այն մասին, թե ինչը դրդեց ինձ անդրադառնալ դասագրքերի հիմնահարցին: Բանն այն է, որ մեր դպրոցում արդեն քանի տարի է (կարծես՝ 2019 թվից)՝ աշխարհագրություն առարկան չի դասավանդվում մասնագետ չլինելու պատճառով: Ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը՝ 5 ժամ (որոշ դասարաններ միավորված են աշակերտների պակասի հետևանքով), հրապուրիչ չէ:

Շուրջ քառորդ դար պատմություն, աշխարհագրություն են դասավանդել, ուստի, հավատարիմ իմ խառնվածքին, չեմ կարող անտարբեր լինել իմ շուրջը տեղի ունեցող իրողությունների նկատմամբ: Ներկայացա կրթության շրջանային բաժին: Ձրույցի ժամանակ հիշեցի Մուրացանի հերոսներից մեկի խոսքը. «Հիվանդը սովից մահանում է, ցորեն հաց չկա տանք առողջանա, բա գարի հաց էլ չտա՛նք»: Հոկտեմբերից վստահեցին դասավանդել աշխարհագրության 5 ժամը: Վերջին տարիների աշխարհագրություն առարկայի դրվածքը փոփոխությունների է ենթարկվել հանրակրթական դպրոցներում: Ուսումնական պլանով պակասել է ժամաքանակը, փոփոխվել է ըստ դասարանների առարկայի վերաբաժանումը, Սակայն չպետք է մոռանալ, որ աշխարհագրությունը հնագույն գիտություններից է, և որ այն տալիս է համապարփակ գիտելիքներ Երկրի՝ որպես մարդկային մոլորակի և մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների գարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով սովորողների մեջ ձևավորում է գիտական, մատերիալիստական աշխարհայացք, աշխարհի միասնականության համոզմունք: Աշխարհագրությունն է, որ օրեցօր զարգացող հիմնախնդիրները (կլիմայական, պարենային, էկոլոգիական, չվերականգնվող բնական ռեսուրսների պաշարների հատման, բնապահպանական, այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման) ճանաչելի է դարձնում սովորողին: Աշխարհագրության միջոցով է սովորողը ճանաչում սեփական հայրենիքը, հասկանում ու գնահատում նրա տեղն ու դերը հարավփոխ աշխարհում: Այս բոլորը հուշում են, որ աշխարհագրության դասագիրքը պետք է այնքան մոտիկ լինի սովորողների համար, որ կարողանան պատկերացնել համամարդկային հիմնահարցերի բոլոր

դժվարությունները և փորձեն անգամ իրենց պատկերացմամբ լուծումների տարբերակներ առաջարկել: Ես մտահոգված եմ հատկապես 7-րդ դասարանի դասագրքի առնչությամբ: Դասագիրքը կոչվում է «Հասարակական աշխարհագրություն» (նախկինում՝ «Տնտեսական աշխարհագրություն»): Հենց առաջին դասի մեջ հեղինակները խոստովանել են, թե որքան բարդ առարկա է «Հասարակական աշխարհագրություն»-ը, և որքան նոր ոլորտներ են ընդգրկված նրանում: Եթե ի սկզբանե առարկայի ուսումնասիրության շրջանակը տնտեսության տարածքային բաշխման հարցերն էին, ապա նոր ժամանակներում դրան ավելացան մարդու գործունեության նոր ձևեր՝ գիտության, հանգստի կազմակերպման, սպասարկման, քաղաքական և սոցիալական այլ հարցերի ուսումնասիրությունը: Վերջերս նրանց ավելացան էկոլոգիայի հիմնահարցերը: Եթե հաշվի առնենք, որ առարկայի հետ սերտորեն կապված հարակից գիտություններից օգտվելը կթեթևացնի աշակերտի հոգսերը, սխալված կլինեն, քանի որ այդ գիտություններն են (հեղինակների վկայությամբ) տնտեսագիտությունը, քաղաքագիտությունը, ժողովրդագրությունը, սոցիոլոգիան: Եթե ավելացնենք նաև այն, որ տնտեսական՝ հասարակական աշխարհագրությունը առաջվա համեմատությամբ դասավանդվում է մեկ-երկու տարով ավելի վաղ, և որ այդ առարկայի հետ առաջին անգամ չվկայել կապված է տնտեսաաշխարհագրական տերմինաբանական մեծ պաշարի յուրացման հետ:

Այս բոլորը վկայում են, որ դասագիրքը պետք է շատ մատչելի և դյուրընթաց լինի սովորողների համար: Սակայն դա միանգամայն այդպես չէ: Միայն ծավալի տեսակետից երկարաշունչ թեմաները՝ 3-4-5, նույնիսկ 6-7 էջերի վրա շարադրված, միանգամայն վանողական, հակակրթական կեցվածք են տալիս: 13 տարեկան երեխաների համար շատ բարդ է այդ ծավալի դասեր սովորել, որոնք նաև ընդգծված ունեն ամենատարբեր քարտեզներ, սխեմաներ, դիագրամներ (որոշ դեպքերում՝ անհամապատասխան ու դժվարամատչելի), որոնց իսկ անդրադառնալը շատ ժամանակ է պահանջում:

Ես փորձ արեցի մասնագիտորեն խորանալ դասագրքերի կամ առանձին թեմաների թերությունների, բացերի մեջ: Դրանք համարյա բոլոր դասարանների դասագրքերում ակնհայտորեն կան: Այն, ինչ տեսանելի է, անգամ սովորողների համար բավարար է՝ պնդելու, որ դասագրքերը մատչելի չեն, և այդ ուղղությամբ դասագրքեր կազմողները պետք է լուրջ մտահոգություններ ունենան:

Լեւոն ԱՈՒՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

ՄԱՐԶԱԶԵԿ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇՈՏՈԿԱՆ ԿԱՐԱՏԵ -ԴՈ ՄԱՐՏԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՖԵՂԵՐԱԳԻՍ

Մայիսի 28-ին Ստեփանակերտի հ.6 դպրոցի մարզադահլիճում տեղի ունեցավ «Ջեյ Քեյ Ես» ճապոնական շոտոկան կարատեի Արցախի առաջնությունը, որը նվիրված էր «Veterans of Armenia» (Armenian federations for Japan Karate shoto «JKS») կազմակերպությանը: Առաջնությունը պատեհ առիթ էր, որ մասնակցող շուրջ 250 մարզիկները ցուցադրեն անցած տարիների ընթացքում իրենց սովորածը: Մարտարվեստի այս յուրահատուկ ոճը ոչ միայն ֆիզիկապես է կոփել մասնակիցներին, այլև՝ նրանց մեջ ձեռավորել է կամքի ուժ ու տոկունություն:



մարզիկի ակտիվ մարզական ողջ կյանքում: Մարմնի ինտենսիվ կատարելագործումը կարելի էր ապահովել մարզիկի բնավորության ձեռավորման գործընթացում: Խոսքը մարզիկի այն հատկանիշների մասին է, ինչպիսին են կենտրոնացվածությունը, նպատակասլացությունը, սթափ ուշադրությունը: Շոտոկան կարատե պարապող մարզիկները երկար տարիների մարզումների շնորհիվ դառնում են ինքնավստահ, իրենց ուժերին ու կարողություններին հավատացող, ինչն էլ մարդուն դարձնում է ինքնուրույն, արտաքին հանգամանքներից չկախված անձ: Դարերի ընթացքում կարատեն

մը. սեւ գոտի 2-րդ դաս Արմեն Իսրայելյան, սեւ գոտի 4-րդ դաս Ժիրայր Թովմասյան, սեւ գոտի 1-ին դաս Զարուբ Ալեքսանյան, սեւ գոտի 1-ին դաս Արթուր Ալեքսանյան, սեւ գոտի 1-ին դաս Միեր Մուսայելյան, սեւ գոտի 1-ին դաս Ռաֆիկ Աբայան, սեւ գոտի 1-ին դաս Միեր Պողոսյան:

Ֆեղերագիայի նախագահ, գլխավոր մարզիչ, սեւ գոտի 2-րդ դաս Ժիրայր Պետրոսյանը ելույթի խոսքում մեկնաբանեց, որ կարատե մարտարվեստը՝ որպես կամքի զարգացման աղբյուր, ունի բազում ոճեր: Այդ ոճերում զարգանալու ճանապարհները տարբեր են, սակայն բոլորի վերջնական նպատակը մեկն է՝ զարգանալ մարմնով, ունենալ կայուն հոգեբանություն, զարգացած ինտելեկտ, բարձր բարոյական գիտակցություն: Կարատե մարտարվեստը ոչ միայն հզոր կոփելու, այլև կոփից հեռու մնալու արվեստ է: Ծնողները մշտապես մտահոգված են իրենց երեխաների ճիշտ ու համաչափ զարգացմամբ:



Ֆեղերագիան Արցախում հիմնադրվել է 2018 թվականին: Ստեփանակերտում այժմ գործում է 7 ակումբ, Մարտակերտում՝ 5: Մինչև 2020 թվականի պատերազմը ֆեղերագիան գործում էր Մարտակերտի շրջանի 10 համայնքներում եւս՝ ընդգրկելով շուրջ 500 մարզիկ: Սակայն, այդ գյուղերն անցնելով Ադրբեջանի օկուպացիայի տակ՝ երեխաները շարունակում են մարզվել ֆեղերագիայի տարբեր ակումբներում: Սա Արցախում գործող միակ մարզածեն է, որտեղ մարզիկները պարապում են անվճար հիմունքներով: Առայսօր էլ ֆեղերագիան գործում է տարբեր բարեգործական նախաձեռնությունների հաշվին: Այսօր էլ ընդունելությունն ու մարզումներն իրականացվում են անվճար:

ների կողմից ցուցադրական ելույթներով՝ ի նշան Հայաստան-Արցախ անկասելի միասնության:

Արեւելյան մարտարվեստներն իրենցից ներկայացնում են մարմնի եւ ոգու կատարելագործում, որտեղ առաջնահերթությունը տրվում է հոգեւոր զարգացմանը: Շոտոկան կարատե պարապող մարզիկները հաղթահարում են սեփական անկատարելիությունը՝ շրջապատող աշխարհի հետ գտնվելով ներդաշնակության մեջ: Հոգեւոր զարգացումը, համատեղած տեխնիկայի ուսումնասիրման ու կատարման հետ, շարունակվում է



անվստահներին՝ վստահություն, մարդու մեջ զարգացնում է կայուն հոգեբանություն, ինչ-որ բանի հասնելու ձգտում, առողջ մարմին եւ դատողություն, հավատ իր ուժի հանդեպ, սովորեցնում է հարգել եւ հարգվել: Այս ամենը մարզիկը ձեռք է բերում երկար ժամանակ մարզվելու ընթացքում: Սա նշանակում է, որ կարատե մարտարվեստը օգնում է ձեռք բերել համբերություն, որը շատ պակասում է մեր օրերում, քանի որ համբերություն ունեցողները կարողանում են հասնել իրենց նպատակներին: Անհրաժեշտ է նշել, որ արեւելյան մարտարվեստները տալիս են զանազան իրավիճակներում արագ կողմնորոշվելու եւ ճիշտ գործողություն կատարելու ունակություն: Կարծում են, որ յուրաքանչյուր հայ պետք է ներդրի իր լուծման մեր հայրենիքի զարգացման գործում: Իմ պարագայում դա իմ ուժեղ սաներն են, որոնք հետագայում կդառնան Հայոց բանակի արժանի զինվորներ:

Մինչև 2022 թվականը ֆեղերագիան գործել է «Վետերանս օֆ Արմենիա» կազմակերպության միջոցներով եւ պետական որևէ աջակցություն չի ստացել: Արցախի առաջնությունը նվիրված էր «Վետերանս օֆ Արմենիա» կազմակերպությանը՝ ի նշան երախտագիտության:

Իր գործունեության 5 տարիների ընթացքում շոտոկան կարատե-դո մարտարվեստների ֆեղերագիան թողարկել է 33 բազմակի չեմպիոններ, տարբեր միջազգային առաջնությունների մրցանակակիրներ, ինչի համար շնորհակալություն հայտնեցին Հայաստանի «Ջեյ Քեյ Ես» ֆեղերագիայի նախագահ հիմնադիր Սերգեյ Խաչատրյանին, որն իր նախաձեռնությամբ բացել է ֆեղերագիան Արցախում եւ շարունակում է բարձր մակարդակով համագործակցել Արցախի ֆեղերագիայի հետ:

Առաջնության բացումն ազդարարվեց Արցախի եւ Հայաստանի հանրապետությունների օրհներգերի հնչեցմամբ: Մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրը, նշանավորվեց մարզիկ-



ծեւավորվել է որպես մարտական արվեստ, որի հիմնական նպատակը մարտիկներ դաստիարակելն է:

Ոգեւորիչ է, որ այսօր ֆեղերագիան կարողանում է ազգային անվտանգության հարցում իր ներդրումն ունենալ՝ կոփելով եւ դաստիարակելով իսկական մարտիկներ, ապագա զինվորներ: Այդ հարցում մեծ է մարզիչների դերը, որոնք ջանք չեն խնայում ամեն օր մարզելու համար մարզիկներին՝ գիտակցելով, որ մարտարվեստները նաեւ ազգային անվտանգության խնդիրների լուծման ուղին են: Առաջնության բացման ժամանակ ներկայացվեց ֆեղերագիայի մարզական կազ-

լու եւ ճիշտ գործողություն կատարելու ունակություն: Կարծում են, որ յուրաքանչյուր հայ պետք է ներդրի իր լուծման մեր հայրենիքի զարգացման գործում: Իմ պարագայում դա իմ ուժեղ սաներն են, որոնք հետագայում կդառնան Հայոց բանակի արժանի զինվորներ:

Ֆեղերագիայի մարզիկները ցուցադրեցին շոտոկան կարատեի հետաքրքրաշարժ հնարքները, հանդես եկան դիտարժան մարտերով: Առաջնության մասնակից մարզիկները պարգեատրվել են մեդալներով, պատվոգրերով ու զավաթներով:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Հաշվետու համերգ

ՇՈՒՇԻ ԱՐՎԵՍՏԻ ԳՊՐՈՅԸ ԵՉՐԱՓԱԿԵՑ ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԼԵՅՈՒՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Շուշի արվեստի դպրոցը հինավուրց հայկական բերդաքաղաքի՝ 1992թ. ազատագրումից հետո այնտեղ ստեղծված մշակութային առաջին հաստատություններից է: Սկզբում կոչվել է մանկական երաժշտական դպրոց, 2014-ին վերանվանվել արվեստի դպրոց: Տնօրեն Լուսինե Հարությունյանը մեզ հետ զրույցում պատմեց, որ մինչև 2020թ. 44-օրյա պատերազմը Շուշի արվեստի դպրոցը հաճախում էր 380 երեխա, դպրոցն ուներ ավելի քան 50 դասատու և աշխատակիցներ: Կրթօջախն իր գործունեությունն իրականացնում էր առանձին երկհարկանի շենքում և սնուցում էր բերդաքաղաքի մշակութային կյանքի զարկերակը:

44-օրյա պատերազմում Շուշին թշնամու կողմից օկուպացվելու հետևանքով արվեստի դպրոցը վերակազմակերպվեց Ստեփանակերտում՝ բաժիններով սփռվելով Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում՝ Գյուլոջյանի անվան արվեստի

դպրոց, պարապմտի քուլեջի դահլիճ, ակումբ, միջանցքներ... Դպրոցն այժմ ունի 203 սան, 28 աշխատող: Գործում են նախկինում ունեցած 9 բաժինները՝ կիրառական արվեստ, կերպարվեստ, երգեցողություն, դաշնամուր, դուդուկ, շվի, ջութակ, դիոլ, պարապմտեստ:

Ստեփանակերտում իր գործունեությունը Շուշի արվեստի դպրոցը վերսկսել է առանց նյութատեխնիկական միջոցների: Բարեգործական խորհուրդակներով դպրոցը ոչ լիարժեք չէր, այնուամենայնիվ ապահովվել է անհրաժեշտ գործիքներով և նյութերով: Դրանում մեծապես աջակցել են ԱՀ նախագահի՝ սփյուռքի գծով խորհրդակցական Ազատուհի Մինոնյանը, ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Դարախանյանը, մոսկվաբանակ երգչուհի Սարիա Քալաշյանը, որը



ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԺԻՐԱՅՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՎԵՏ



Ծնվել է 1992թ. հուլիսի 15-ին Ստեփանակերտում: 5 տարեկանից սկսել է հաճախել ավանդական կարատե-դո մարտարվեստի պարապմունքների՝ մարզիչ Ժիրայր Թովմասյանի մոտ: Փոքր տարիքում, դեռևս լրիվությամբ չհասկանալով կարատե մարտարվեստի դերն ու նշանակությունը, փորձում էր պատճառներ գտնել պարապմունքներին չհաճախելու համար: Ծնողների կողմից չէր ուղղունվում մարզումներից բացակայելը, ինչն էլ պատճառ դարձավ, որ մարզիկը ոչ միայն չբացակայի պարապմունքներից, այլև ընկղմվի մարտարվեստի հետաքրքրաշարժ աշխարհ, հասնի հաջողության, ունենա ձեռքբերումներ, իսկ հետագայում մարտարվեստ ուսուցանելը դառնա նրա կյանքի գործը:

Դարոցն ավարտելուց հետո ընդունվում է ԱրՊՀ-ի ՆՁՊ եւ ֆիզկուլտուրայի բաժինը: Ժիրայր Պետրոսյանը 37 բազմակի չեմպիոն էր, ինչպես նաեւ ստացել էր 1-ին դաս սեւ գոտի, ինչն էլ արդեն իսկ հնարավորություն էր տալիս նրան նաեւ մարզական գործունեությամբ զբաղվել: 2010-2012թթ. կատարեց իր գինվորական պարտքը՝ ծառայելով ԱՀ ՊԲ շարքերում: Մարզական եւ մարզական հմտություններն աննկատ չմնացին հրամանատարության կողմից. առաջարկվեց, որ ծառայության շրջանակներում կարատե մարտարվեստ պարապի Կիչան գյուղում, ինչն էլ դարձավ նրա մարզական գործունեության մեկնարկի առաջին քայլը: 2012 թվականից առայսօր զբաղվում է մարզչությամբ:

Ժիրայր Պետրոսյանն ավարտել է Բրիտանական ռազմական ակադեմիայի դասընթացներ 26-իսիայի 3անրապետությունում, ստացել միջազգային կարգի հրահանգչի կոչում:

2018 թվականին սեւ գոտի արդեն 2-րդ դաս տիրապետող Ժիրայր Պետրոսյանն սկսել է նախագահել Արցախում նորաբաց «Ջեյ Քեյ Էս» ճապոնական շոտոկան կարատե-դո մարտարվեստների ֆեդերացիան՝ ստանձնելով նաեւ գլխավոր մարզչի պարտականությունները: Ֆեդերացիայի ներքո շարունակում է գործունեությունը ծավալել առայսօր:

- Սենսեյ, եթե մարտարվեստներ սովորող մարդու նպատակը դրանց միջոցով ինքնակատարելագործվելն է, ապա ինչո՞ւ է մեծ կարևորություն տրվում մրցույթներին: Մի՞թե հաղթական պատվանդանին կանգնելն ու առաջնությունում հաղթելու բերկրանքը վայելելն է մարդուն մոտեցնում կատարելության:

- Մարզիկի կյանքում մրցումները կարևոր դեր են խաղում, միանշանակ բայց ոչ այնքան կարևոր, որ մրցույթին մասնակցելն ու հաղթելը դառնա նպատակ: Արեւելյան մարտարվեստները տարբերվում են սպորտից: Կարատեն ճանապարհ է, որն անցնելով է մարզիկը ինքնակատարելագործվում, ունենում առողջ մարմին, կայուն հոգեբանություն: Մրցումներն այդ դժվարին ճանապարհի մասն են կազմում: Դրանք թույլ են տալիս հասկանալ թույլ եւ ուժեղ կողմերը, ծանոթանալ մրցակցի տակտիկային, նոր փորձ ձեռք բերել ու անընդհատ աշխատել թերությունները շտկելու ուղղությամբ:

- Ինչպե՞ս հասկացաք, որ մարզիչ լինելը Ձեր կոչումն է: Լավ մարզիկը նաեւ լավ մարզիչ է:

- Զինվորական ծառայության ժամանակ երբ ինձ հնարավորություն տրվեց աշխատել երեխաների հետ, հասկացա, որ սերունդ մարզելը հարիր է իմ հոգուն, ինձ դուր էր գալիս երեխաների հետ աշխատելը, իսկ նրանք էլ ինձ էին սիրում՝ որպես մարզչի: Ժամանակի ընթացքում փորձ ձեռք բերելուն զուգահեռ նաեւ հաստատվեցի իմ այդ մասնագիտու-

թյան մեջ: Լավ մարզիկ լինելն ու լավ մարզիչ լինելը տարբեր բաներ են: Բոլորն էլ կարող են լավ մարզիկ լինել, բայց լավ մարզիչ քչերը կարող են դառնալ: Լավ մարզիչը բացի իր գիտելիքներից ու հմտություններից նաեւ շատ սեր պետք է ունենա իր մեջ թե՛ մարզածելի, թե՛ սաների եւ թե՛ այն աշխատանքի հանդեպ, որը կատարում է եւ չընկճվի, եթե որեւէ աջակցություն կամ արժանի գնահատանք չի ստանում:

- Պատմե՛ք ֆեդերացիայի մասին:

- Արցախի JKS ֆեդերացիան (ճապոնական կարատե շոտոկան) ստեղծվել է 2018թ. իմ նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով Արցախի մատաղ սերնդին համախմբել ճապոնական շոտոկան կարատե մարտարվեստի շուրջ, կոփել ֆիզիկապես եւ հոգեպես, ինչպես նաեւ հնարավորություն ստեղծել միջազգային մրցահարթակներում հանդես գալ ու բարձր պահել երկրի պատիվը: Մինչ 2020թ. 44-օրյա պատերազմը ֆեդերացիայի ներքո մարզվում էին 5-17 տարեկան շուրջ 600 մարզիկներ՝ տղաներ ու աղջիկներ: Ընդ որում, խմբերը գործում էին Ստեփանակերտում ու շրջաններում: Ներկայումս մայրաքաղաքում եւ շրջաններում մարզվող ֆեդերացիայի սաների թիվը շուրջ 350 է: Ֆեդերացիայի մարզչական կազմը համալրում են Արցախում ծանաչված եւ փորձառու 8 մարզիչներ: Սկսած 2018 թվականից, կազմակերպվել են մրցումներ ու մարզական միջոցառումներ մեր մարզիկների մասնակցությամբ: 3նարավորություն ենք ունեցել միջազգային մր-

ցասպարեզներում հանդես գալ եւ հաղթել ու մրցանակային տեղեր զբաղեցնել: Նշեմ, որ մեր ֆեդերացիան երբեք պետական աջակցություն չի ստացել, առավել եւս, ֆեդերացիայի ներքո մեծ թվով մարզիկներ կոփելու ու դաստիարակելու բարդ եւ պատասխանատու աշխատանքը պատշաճ չի գնահատվել: Թող կոպիտ չինչի ասածս, բայց երբ էլ որ դիմել են օգնության, մեր պատկան մարմինները սահմանափակվել են միայն խոստումներ տալով՝ դրանով ոչ թե խթանելով, այլ նույնիսկ խանգարելով մեր գործունեությանը: Մինչեւ 2022 թվականի վերջը ֆեդերացիան կատարել է իր գործունեությունը շնորհիվ ամերիկյան «Veterans of Armenia» կազմակերպության կողմից կատարվող հովանավորության: Ներկայումս էլ մարզիկների համար պարապմունքներն անց են կացվում բացառապես անվճար հիմունքներով: Ընդհակառակ էմ 3այաստանի «Ջեյ Քեյ Էս» ֆեդերացիայի նախագահ եւ Արցախի համանուն ֆեդերացիայի հիմնադիր Սերգեյ Խաչատրյանին, որի հետ համագործակցելով՝ բացվել է ֆեդերացիան Արցախում: Ըարունակում ենք բարձր մակարդակով համագործակցել միմյանց հետ:



- Ժամանակի մարտահրավերները հաշվի առնելով՝ ներկայումս միտում կա մարզական դեպի մարտական անցման, քաղաքացիների շրջանում մարտունակության բարձրացման գործընթացի կազմակերպման, որում մեծ դեր պետք է ունենան մասնավորապես մարտարվեստների մարզիչները: Ի՞նչ եք մտածում դրա մասին:

- Կարծում եմ, որ ժամանակը ցույց կտա, թե որքանով են մեր հայրենակիցները կարևորում նման օրագրերի անհրաժեշտությունը ու որքանով են պարտաճանաչ հաճախելու եւ կենսական կարևորության նշանակության հմտություններ սովորելու: Այս պահին դեռ չի նկատվում, որ մեր քաղաքացիները այսպես խմբովին պարտադիր հմտություններ

ստանալու կարիք են զգում: Կան առանձին մարդիկ, որոնք շահագրգռված են կամ պարզապես հետաքրքրված են մարտական պատրաստություն ստանալու մեջ եւ գտնում են այն ուղիները, որոնք տանում են դեպի իրենց հետաքրքրությունների բավարարում: Եթե ստացվի դա մասսայական դարձնել, ես ընդամենը ողջունել կարող եմ: Բայց տեղին է նշել, որ մեր կողմից կատարվող աշխատանքն էլ քիչ չեն առողջ, կոփված սերունդ ունենալու հարցում: Մեր գործունեությունը տարբերվում է նրանով, որ մենք անում ենք այն աշխատանքը, ինչը շատերը չեն անում:

- Ի սկզբանե լինելով մարտիկներ պատրաստելու հզոր արվեստ՝ ճապոնական շոտոկան կարատե-դո մարտարվեստի տեխնիկան համապատասխանում է, արդյոք, իրական մարտի ժամանակ կիրառվող հնարքներին:

- 3արցի պատասխանը միանշանակ չէ. որոշ չափով՝ այո, իսկ որոշ չափով՝ ոչ: Կարատեն միայն կոնվել չէ: Մեծ նշանակություն ունի ոգու զարգացումը կամ, այլ կերպ ասած, հոգեբանական պատրաստությունը: Եթե համեմատենք, ապա իրական մարտերի ժամանակ մեր սաների ողջ մնալու կամ թեթև վնասվածքով մարտն ավարտելու հնարավորությունն ավելի մեծ է, քան նրանց, ովքեր պարապած չեն: Մարզված մարդը պատրաստ է, նա անակնկալի չի գալիս հարձակումից, վնասվածքները նույնպես նրան չեն խանգարում մարտը շարունակել, քանի որ նա գրեթե յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ անցնում է դրա միջով եւ սովոր է: Իսկ ավելի կատարելագործված մարզիկը կարողանում է կանխել մարտը, այսինքն՝ ավարտել այն մինչեւ սկսվելը: Կարատեում հայտնի սկզբունք կա. սկսվազույն մարտը այն է, որը հաջողվել է կանխել: Մեր սաները սովորում են հեռու մնալ կռիվներից, իսկ եթե մարտն անխուսափելի է, կարողանում են պաշտպանվել: Իմ սաների մեջ կան տղաներ, որոնք ցուցաբերել են բարձր առաջադիմություն ապրիլյան եւ 44-օրյա պատերազմների ժամանակ՝ շնորհիվ մարտարվեստներում ունեցած կոփվածության: Սա արդեն վկայում է այն մասին, որ մարտարվեստների մասսայականացումն ու պետական մասշտաբով աջակցությունը կարող են ազգային անվտանգության խնդիրներ լուծել:

- Ի՞նչ նպատակներ ու նախապատվություններ ունեք, ի՞նչն եք կարևորում կյանքում:

- Զգտում եմ լավ գործերով լավություն անել մարդկանց, օգնել, վայելել շրջապատի սերն ու հարգանքը: Կարևորում եմ առողջ եւ կոփված սերունդ ունենալը, ինչին էլ միտված է իմ մարզչական գործունեությունը: Նախապատվություն եմ տալիս առողջ ապրելակերպին, ինքս այդպես եմ ապրում, սիրում եմ լինել ներդաշնակ շրջապատող աշխարհի հետ: Իսկ ամենագլխավոր նպատակս ընտանիքում հաջողություն ունենալն է, լավ հայր ու սիրված անուսին լինելը, ինչպես նաեւ լավ ընկեր լինելը:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

Երևանում բարեգործական համագործակցություն է ստեղծվել և հասույթն ուղղել դպրոցի համար երաժշտական գործիքներ ձեռք բերելուն:

«Շուշիի դպրոցի ամենամեծ խնդիրը ներկայումս պարապմունքներն անցկացնելու համար ազատ սենյակներ չունենալն է: Պարապում ենք՝ որտեղ ազատ սենյակ գտնվի»,- ասում է տնօրեն Լուսինե 3արությունյանը: Տեղահանվածի վիճակին զուգարվել են նաև շրջափակմամբ պայմանավորված դժվարությունները:



2022թ. լրացել էր Շուշիի արվեստի դպրոցի 30-ամյակը: 2լիններ պատերազմը, արվեստի այս օջախը հարազատ բնօրրանում շուրջով կնշեր իր հոբելյանը: Բայց հիմա պայքարում է ունեցածը պահել-պահպանելու համար և այդքանով իսկ հաջող է համարում հերթական ուսումնական տարվա եզրափակումը, ինչի կապակցությամբ մայիսի 30-ին հանդես եկավ հաշվետու համերգով:

դահլիճում արվեստի բոլոր բաժիններով հանդես եկան սաները՝ ոգևորության պահեր պարզելով ներկաներին:

Շուշիի կրթության և

Միջոցառումը լավ առիթ էր մի հարկի տակ մեկտեղելու շուշեցիներին: Ը. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի նախարահում ցուցադրված էին կերպարվեստի և կիրառական արվեստի բաժինների սաների աշխատանքները, իսկ

սպորտի բաժնի վարիչ Իրա Սարգսյանը շնորհավորեց արվեստի դպրոցի սաներին, նրանց ուսուցիչներին՝ դժվարություններով հանդերձ՝ նման զեղեցիկ միջոցառում կազմակերպելու համար. «Մեզ բաժին է հասել հայոց պատմության ամենադժվար ժամանակներից մեկը: Բոլորս այսօր շատ դժվար պայմաններում ենք մեր կյանքը շարունակում, բայց միասնական լինելով՝ կարող ենք հաղթահարել դժվարությունները, մեր փոքրիկներին մեծացնել, կազմակերպել նրանց ուսուցումը և մյուս միջոցառումները մեր հայրենիքում, որն Արցախը պահելու կարևոր պայմաններից է»:



Միջոցառման մասնակիցների փափագն էր վերստին հանդիպել Շուշիում, և միմյանց համբերություն մարթեցին:

Ս. ԽԱԶՏՐՅԱՆ

ԱՅԼԱԶՆ

ԵՐԿՈՒ ԿՅԱՆՔ՝ ՄԻ ԱՄԲՈՂՉՈՒԹՅՈՒՆ

Նրան երբ բերին իր մոտ տնկեցին, ինքը շատ ուրախացավ: Նախ՝ որ առաջին հայացքից իրեն դուր եկավ, երկրորդ՝ ինքն այդտեղ մենակ էր՝ հեռու մյուս ծառերից: Չէ, իր մենակությունը իրեն ձեռք էր տալիս. ազատ էր, տարածությունը՝ ընդարձակ, չորս կողմը՝ հստակ, պարզ երևում էր: Եվ չէր էլ պատկերացնում, որ կհամակերպվի որևէ մեկի ներկայությանը իր մոտ: Բայց արի ու տես, որ այս տնկած ծառը իրեն օր օրի ավելի է դուր գալիս, և օր օրի ավելի է կապվում նրան: Բայց նոր տնկած ծառի վեցն էլ չէր: Քիթը ցցել էր, երեսը թեթել մի կողմ ու եթե նայում էլ էր, աչքի մի պոչով, հենց այնպես, իբր՝ դու էլ կա՞ս... Դա իրեն ցավ էր պատճառում ու անհանգստացնում: Հետո սովորեց դրան: Սովորեց նաև այն բանին, որ նրան մերձեցնելու իր ջանքերը զուր են բարիդրացիական հարաբերություններ պահելու, պահպանելու համար:

Այդ տնկած ծառը կարճահասակ էր: Կարճահասակ էլ մնաց: Նուրբ էր, բարակիկ, սև աչքունքով: Ամենազեղեղեցիկը նրա վարսերն էին: Նա մնան չէր ուրիշ ծառերի: Նա ասես հատուկ սարքած-ձևավորած լիներ: Ինքը հնազանդ էր նրանով ու գիտեր, որ այլևս շուրջը կամ հեռուները իրեն էլ ոչ մի բան չի հետաքրքրելու: Միայն մի բան էր ուզում ինքը. երկար ապրի, ու իր ողջ կյանքի նպատակը նվիրվելը լինի նրան: Տնկած ծառն էլ շատ շուտ հասկացավ, որ իր տեղն այդտեղ է, այդ հսկա ծառի մոտ: Հսկա, կոշտ-կոպիտ, բռի, ինքնահավան, մեծամիտ, տգեղ... Եվ ինքը ինչ էլ անի, այդտեղից էլ չի կարող պոկվել: Նույնիսկ ուժեղ քամիների ժամանակ երա-

զեց, փորձ արեց, թե միգուցե մի վերջին ճիգով կարողանա պոկվել ու գնալ հեռու-հեռու, այն վեր ու սլացիկ ծառերի մոտ, այն թավուտ անտառը: Բայց՝ ապարդյուն. անհաջող ու սին երազանքներ, ծգտումներ... Գուցե դրանից էլ բոլոր կարծ մնաց: Որովհետև ինքը երբ առաջ էր ձգվում, արմատներն ավելի



խորն էին մխրձվում հողի մեջ ու տարածվում-տարածվում... Մի օր էլ նույնիսկ խուտուտ զգաց, ուզեց արմատին կապած արմատիկը ետ ձգել, բայց ավելի խճճվեց ու ուրվեց այդ անճոռնի ծառի ավելի անճոռնի արմատին... Ի՞նչ աներ, փրկվում չկար. մի կուխ այդ էր մտածում, որ փրկվում չկա: Դեռ ավելին,

այնտեղից, որտեղ խուտուտ էր զգում, կանաչ ծիլ դուրս եկավ... Ծիլը միամիտ ժպտում էր: Խոժոռվել էր ինքը, իսկ նա՝ այդ անճոռնին, այնպես՝ անմեղ դեմք էր ընդունել ու այնպես՝ զմայլվել... Ինքը այդ ծիլը կգրկեր, բայց չտեսնելու տվեց, քանզի կարող է նրանը լինել, նրա արմատից... Իսկ եթե իրենն է, և նրա հետ ոչ մի կապ չունի... Անորոշությունն ու զայրույթն

միակ մեջքին ցավ զգաց, բայց կարողացավ գլուխն ազատել նրա հարվածի թափից: Չէ, չխղճաց նրան, չնայած, ճիշտն ասած, մի քիչ, ասես հոգին ինչ-որ ցավեց: Մի խոսքով, ինքը այն ժամանակ դրան ուշադրություն դարձնել չուզեց: Մի ամիս չանցած՝ ծառի մյուս մասն էլ չորացավ, տերևները թափվեցին, բունն ու ճյուղերը կարծրացան, ու արդեն չէր ջոկվում՝ դիմացինը քա՞ր է, թե՞ փայտ: Իր աչքի առաջ ծառը մեռավ ու մի «ու՛ֆ» էլ չարեց: Գոնե մի անգամ տնքար, գոնե մի անգամ դժգոհեր... Չէ, մեռավ կանգնած, միջից կիսված: Ու ինքը նրան գոնե մի անգամ մի քաղցր խոսք չասաց, գոնե մի անգամ վրան չնայեց, գոնե մի անգամ... Ե՛, էնքան բան կարելի էր անել, որ ինքը չարեց... Իսկի չիմացավ էլ, թե ով է նա, որտեղից է, ինչպես է հայտնվել այդտեղ, և այլև, և այլև...

Հետո իր ողջ ապրած կյանքը նայում էր, նայում չորացած ծառին ու նոր նկատում, որ նա այնքան էլ տգեղ չէ, նույնիսկ, կարելի է ասել, շատ էր սիրուն, բարձրահասակ... Հիշում էր նրա ուշադիր հայացքը՝ սևեռված իրեն, ու սիրտը մոկտում էր... Չէ, իրեն չէին հետաքրքրում այլևս այն հեռու ծառերը, այն թավուտ անտառը, իրեն էլ ոչինչ չէր հետաքրքրում, այլ միայն մի բան, այն շյուղը, որ օր օրի մեծանում է, կնճամփ՞, արդյոք, նրան... Ախ, երանի՜ նմանվեր նրան ու հենց նրա որդին լինեմ, նրա ու իր, իր ու նրա...

Լատիա ՂՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2023թ. հունիսի 27-ին՝ ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դատական եղանակով աճուրդ վաճառք հետևյալ լոտերով.

Լոտ 2 - Հարի/միքսեր/ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամանով՝ 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 225.444 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Կրեմի սրսկիչ՝ DE DANIELI RMP83 15լիտր, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 78.643 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 209.715 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Խմորիարիչ՝ K-M130 130կգ, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 262.144 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Վառարակ՝ Bassanina zoom 1212 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 524.288 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50X70սմ(18դարակ) 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 73.400 ՀՀ դրամ:

Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kemplex SF600/1400, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 183.501 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ) 7 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ) 72հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 110.625 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x*80 սմ(18դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ) 108հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 264.242 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Խմորիարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ 1հատ, նախկինում օգտագործված,

գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 340.787 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 235.930 ՀՀ դրամ:

Լոտ 13 - Վառարակ՝ Bassanina rotor 57 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 524.288 ՀՀ դրամ:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 39.322 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ-ի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետք է ներկայացվեն հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախաձեռնի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախաձեռնը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայթիգնեսթանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մ/դ հ/հ 1150012179069063:

Աճուրդին մասնակցել ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել՝ ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.097-22-29-22 կամ 043-08-17-33:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սնանկության գործով կառավարիչ

ՍՆԱՆԿ ԸՆԱՄՉՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՀ ԸԻ դատարանի ԸԻԴ/0005/04/23 սնանկության գործով առ 17 մայիսի 2023թ. վճռով ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ-ն ծանաչվել է սնանկ:

Դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ծ Արայիկ Արմենի Հակոբջանյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին հայտարարության պահից սկսած մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի 1-ին ժողովը նշանակված է 2023 թվականի հուլիսի 20-ին ժամը 12:00-ին Ստեփանակերտ քաղաքի ստավայրում:

ԸԻԴ/0005/04/23 սնանկության գործով կառավարիչ
ա/ծ Արայիկ Հակոբջանյան

ԼՈՒՍԱՐԱՐ | ԽՍԲԱԳԻՐ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 06.06.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: